Doi: 10.56737/2953-7843-2025.06-24

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր

ԼԵՌԱՆ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ)[1]

«Լեռան վրա բարձրանալու» համար հարկ է ճշտորոշել հասկացության երկու իմաստային դաշտերը. Աստվածաշունչ եւ հայրախոսական ժառանգություն։ Առանց առաջինի մեջ թափանցելու անկարելի է ներկայացնել երկրորդը։ Առաջինի հզոր ներկայությամբ է պայմանավորված երկրորդը։ Աստվածաշնչում լեռան երկու կարգի նկարագրություն ենք տեսնում. Լեռը որպես երկրաբանական գոյացություն, երբ ներկայացվում է նրա բարձրադիր լինելը։ Միանգամայն հասկանալիորեն շրջանցում ենք լեռան այս բնական նկարագրությունները, եւ ծանրանում այն պահերի վրա, երբ լեռը համարվում է զետեղարանը հոգեւորի։ Այս մոտեցումը ներկա է ինչպես Հին այնպես եւ Նոր կտակարանում։ Իրենց հոգեւոր բովանդակությամբ նշանակալից շատ իրադարձություններ Աստվածաշնչում կատարվում են լեռների վրա։ Սա մեծապես պայմանավորված է լեռնագագաթի բարձր, երկնամերձ՝ դիրքով, որ պատշաճագույն պայմանն է Աստծու եւ մարդու հանդիպման։ Հանդիպում, որ տեղի է ունենում Աստծու նախաձեռնությամբ։ Այս պարագան է արձանագրված Աստվածաշնչի հետեւյալ տեղիներում. «Ի լերինն այնմիկ Տէր երեւեցաւ...» (Ծննդ. ԻԲ. 14), «Պաշտեսջիք զԱստուած ի լերինս յայսմիկ» (Ելք Գ. 12), «Եւ Մովսէս ել ի լեառն Աստուծոյ» (Ելք ԺԹ. 3), «Կոչեաց զնա Աստուած ի լեռնէ անտի» (Ելք ԺԹ. 3), «Իջցէ Տէր յանդիման ժողովրդեանդ ի լեառնդ Սինա» (Ելք ԺԹ. 11), «Եւ էջ Տէր ի լեառնն Սինա, ի գլուխ լերինն» (Ելք ԺԹ. 20), «Ելա առ Իս ի լեառնն, եւ անդ լինիջիր, եւ տաց քեզ տախտակս» (Ելք ԻԴ. 12), «Զգո՛յշ լեր, որպէս ցուցաւ քեզ աւրիանակ ի լերինն՝ արասցես» (Ելք ԻԵ. 39), «Խաւսեցաւ ընդ նմա Տէր ի լերինն Սինայ» (Ելք ԼԴ. 32), «Խաւսեցաւ Տէր ընդ ժողովրդեանն ձերում ի լերինն» (Բ. Օր. Ե. 22), «Լեառն Սիոն այս, ուր բնակեցեր դու ի

---

[1]* *Ստացվել է՝ 4.04.2025, գրախոսվել է՝ 5.05.2025։ Էլ. հասցե՝* hakob qjoseyan@yandex.ru։

սմա» (Սաղմ. ՀԳ. 2), «Ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո» (Սաղմ. ԺԴ. 1), «Ո՞վ ելցէ ի լեառն Տեառն» (Սաղմ. ԻԳ. 3)։ Լեռան վրա կատարված իրադարձությունների կարեւորությունը թելադրում է անձնավորել այն։ Այս երեւույթը Դավիթ Քոբայրեցին որակում է իբրեւ բարառնություն։ Իր՝ Հոբի մեկնության մեջ նա գրում է. «Բարառնութեամբ ասէ. «Որպէս լերանց խայտալ եւ գետոց ծափս հարկանել...»[2]։ Բնորոշ են հետեւյալ օրինակները. «Արդարութիւնք Քո որպէս լերինք, Աստուած» (Սաղմ. ԼԵ. 7), «Ուրախ եղիցի լեառն Սիոն...» (Սաղմ. ԽԷ. 12), «Առցեն լերինք զխաղաղութիւն ժողովրդեան» (Սաղմ. ՀԱ. 3), «Լերինք ցնծացին որպէս խոյք եւ բլուրք՝ որպէս գառինք» (Սաղմ. ՃԺԳ. 4), «Գոչեցէ՛ք լերինք զուրախութիւն» (Ես. ԽԴ. 23), «լերինք եւ բլուրք կայտառեսցե՛ն ընդունել զձեզ» (Ես. ԾԵ. 12), «Լերի՛նք Իսրայէլի, լուարո՛ւք զպատգամս Ադոնայի Տեառն» (Եզեկ. Զ. 3), «Աւրհնեցէ՛ք լերինք եւ բարձունք, զՏէր» (Դան. Գ. 73), «բղխեսցեն լերինք զքաղցրութիւն» (Ամոս Թ. 13)։

Երեւույթի ճիշտ արժեւորման համար օգտակար է թվում Փիլոն Ալեքսանդրացու «Եւ իջին փառքն Աստուծոյ ի վերայ լերինն Սինայ» (Ելք ԻԴ. 16) տեղիի մեկնությունն, ըստ որի Սինա լեռն «ընտանեգոյն է ընդունել յայտնութիւն Աստուծոյ»։ Եւ այս հանգամանքն ինքնին արդարանում է «Սինա» անվան բացատրությամբ, քանզի այն «ի մեր լեզուս ասի «անմատոյց». Արդ, անել եւ անմերձենալի արդարեւ է աստուածային վայրն, եւ ոչ սրբագոյն մտացն այսչափ բարձրութիւն առ նա ելանելոյ կարացեալ, իբրու թէ ընդհարեալ միայն մերձենալ»[3]։ Ինչպես երեւում է, աչքի առջեւ ունենալով այս բացատրությունը, Ստեփանոս Սյունեցին իր Քառավետարանի մեկնության մեջ գրում է. «Ի լեառն ելաներ Փրկիչն, զժողովրդոցն աղմուկ թողեալ յինքենէ, առեալ ընդ Իւր աշակերտսն, զորս արժանաւորեաց առնել ընդ Իւր խորհրդակիցս, իսկ ի լեառն թուի ելանել ոչ միայն յերեւելիս, այլ մանաւանդ յաներեւոյթն, նորին նմանեալ եւ Մովսէս, յոր ապա ուրեմն զհանդերձեալ եւ զաւետեաց յերկրէն ասէ, զոր խոստացաւ պարգեւել Աբրահամու եւ ճշմարիտ որդւոցն նորա՝ ոչ ըստ մարմնոյ ծնելոցն ի նմանէ, այլ ըստ գործոց արդարութեան...»[4]։ Աստվածային հայտնության թելադրանքով, եւ դրա հիման վրա կատարված այլաբանական

---

[2] *Տե՛ս Վենետիկ, ձեռ. 347, թ. 83ա։*

[3] *Մեկնուի. ելից II խե. տե՛ս Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս, որ է Մեկնութիւն Ծննդոց եւ Ելից...», աշխատ. հ. Մկրտ. վրդ. Աւգերեանց, Վենետիկ, 1826, էջ 501–502։*

[4] *Տե՛ս ՄՀ, հտ. Զ, էջ 165 [2]։*

վերացարկումների շնորհիվ լեռան ժայռեղեն գագաթն այլեւս զրկվում է զանգվածեղ կոշտությունից, ձեռք բերում ոգեղեն անկշռելիություն, իմացական բովանդակություն՝ դառնալով «մանաւանդ յաներեւեոյթն» (Ստեփանոս Սյունեցի) գաղափարի այլակեցությունը։ Այս իրապայմաններում տարածքը, որպես այդպիսին, դադարում է գոյել՝ զերծ մնալով նյութական իրականությանը բնորոշ պայմաններից։ Տարածականության բնական չափումներն իրենց տեղը զիջում են հոգեւոր չափումներին, այն է՝ տարածության սրբազնությանը։ Այս իրողության վաղագույն հայտնությունը կարելի է համարել «ի լեառն Աստուծոյ ի Քորեբ» Մովսես նախամարգարեի հետ կատարվածը, երբ «կոչեաց զնա Տէր ի միջոյ մորենւոյն, ասէ... Մի՛ մերձենայր այսր, լո՛յծ զկաւշիկս քո յոտից քոց, զի տեղիդ, յորում կաս դու, երկիր սուրբ է» (Ելք Գ. 1, 5)[5]։ Տեղի սրբազնության այս գաղափարին համերաշխ է Սաղմոսերգուի հետեւյալ հարցումը. «Ո՞վ ելցէ ի լեառն Տեառն, կամ ո՞վ կացցէ ի տեղւոջ սրբութեան նորա» (ԻԳ. 3)։ Քորեբ կամ Սինա լեռան վրա է, որ տրվեցին աստվածային օրենքները՝ տասնաբանյա պատվիրանները (տե՛ս Ելք. Ի 3–17), որոնց վերաբերյալ ակնարկվում է Դատ. Ե. 5, Սաղմ. Կէ. 8, 17, Ամբ. Գ. 3 ։ Այս լեռան վրա է, որ Աստված իրեն հայտնեց Եղիային, երբ վերջինս փախչում էր Հեզաբելի բարկությունից (Գ. Թագ. ԺԹ.)[6]։ Ի հետեւանս սրա այն ընկալվում եւ համապատասխանորեն բացատրվում է որպես վերտարածական իրողություն կամ նշան։ Լեռան այս հանգամանքը արձանագրված է Աստվածաշնչի հետեւյալ տեղիներում. Ծննդ. Ը. 4, Ելք Դ., ԺԹ. 1, Թիւք Ժ. 33, Բ. Օր. ԺԱ. 29 Իէ. 12–26, ԻԸ., Դատ. Թ., Սաղմ. ՁԴ. 7, Գ. Թագ. ԺԸ. 20–40, ԺԹ., Ես. ԻԴ. 23, Մատթ. Ժէ. 1,Ղուկ. Թ. 28–36։ Լեռան էապես նորովի ընկալումն է հայելացնում հետեւյալ արտահայտությունը. «Ոչ էք մատուցեալ առ լեառն շաւշափելի, որ հրովն վառեալ էր, եւ միգով եւ մառախղով եւ խաւարաւ եւ մթով... այլ

---

[5] *Տարածքի սրբազնության վերաբերյալ աստվածային այս հրահանգը հետեւյալ խորհրդաբանական արժեվորումն է ստանում Գրիգոր Նյուսացու գրչի ներքո. «Պետք է մերկացնել հոգու ոտքերը անկենդան մորթիների երկրային հանդերձանքից, որոնցով հանդերձված էր մեր բնությունն ի սկզբանէ, երբ մերկացվեցինք աստվածային պատվիրանին չհնազանդվելու պատճառով։ Երբ այդ բանը կատարենք, ճշմարտության ճանաչումը կհետեւի դրան՝ հայտնվելով ինքն իրեն». տե՛ս* Սուրբ Գրիգոր Նյուսացի, *Մովսեսի կյանքը, թրգմ. ֆրանս.՝ Պ. Շահբազյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 51։ Ըստ այսմ ոտնամաններից՝ աշխարհային մտմտուքից՝ ձերբազատվելը պայման է՝ ներդաշնակվելու տարածքի հոգեւոր բովանդակությանը։ Ի դեպ, Գրիգոր Նյուսացու հիշյալ երկի հին հայերեն թարգմանությունը բացակայում է։*

[6] *Տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 501–502։*

մատուցեալ էք ի Սիովն լեառն եւ ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ, յերուսաղէմ յերկինս եւ բիւրաւորս բանակս հրեշտակաց...» (Եբր. ԺԲ. 18–22)[7]։

Սինա լեռան վրա կատարված իրադարձությունը իմաստավորված է Աստծու ներկայությամբ։ Այս կապակցությամբ բնութագրական է Եսայու մարգարեության հիշյալ «Եւ լերինք գոչեցին զուրախութիւն...» տեղի (ԽԴ. 23)՝ Դավիթ Քոբայրեցու բացատրությունը. Սա եղավ «ի ժամանակի, զի Աստուածութիւն յայտնէր ի լերինն...»[8]։ Լեռը ոչ միայն Աստվածության հայտնության վայր է, այլեւ ինքն իսկ համարվում է աստվածային օգնության հայտանիշը։ Ես. Ժ. 32-ի մեկնության մեջ այս մասին ասվում է. «Լեառն աստ զաստուածային աւգնութիւն ասէ»[9]։

Լեռան[10] բարձրադիր, մեկուսի լինելը նպաստավոր պայման է հոգեւոր խոկումի եւ աղոթքի համար, ուստի միանգամայն հասկանալիորեն մարգարեն նկատում է, թե՝ «տուն Աստուծոյ ի վերայ գլխոց լերանց» (Ես. Բ. 2)[11]։ Այս հիմամբ լիովին բացատրելի են աղոթքի նպատակով Քրիստոսի հաճախադեպ մեկուսացումները լեռան վրա ։ Այսպես, ժողովրդին արձակելուց հետո, նա «ել ի լեառն առանձինն կալ յաղաւթս, եւ իբրեւ ընդ երեկս եղեւ, անդ էր միայն» (Մատթ. ԺԴ. 23, նաեւ՝ Մրկ. Զ. 46, «Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել ի լեառն՝ կալ յաղաւթս, եւ հանէր զգիշերն ի գլուխ յաղաւթսն Աստուծոյ». Ղուկ. Զ. 12, նաեւ՝ Թ. 28, «Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն ի լեառն Ձիթենեաց... Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ քարընկէց մի, եդ ծունր, կայր յաղաւթս». ԻԲ. 39, 41)։ Աստվածաշնչական

---

[7] *Ի դեպ, այս տեղի ոսկեբերանյան մեկնության մեջ ասվում է. «Տաճարում էր զարմանահրաշ Սուրբ սրբոցը, նրանց մոտ էր նաեւ սարսափելին, որ կատարվում էր Սինա լեռան վրա. կրակը, ամպը, խավարը, հողմը, որովհետեւ ասված է, թե Աստված երեւաց կրակի, հողմի ու խավարի մեջ (Բ. Օր.Ե. 22)։ Ոչ մի նման բան չեղավ նոր ուխտի տնօրինման ժամանակ. այլ այն շնորհեց Քրիստոս՝ մի պարզ խոսքով...». Hom. 32. PG, t. 63, 219։*

[8] *Տե՛ս Երուսաղէմ, ձեռ.1758, էջ 374։ Պատահական չէ, որ Քրիստոսի Աստվածությունը հայտորոշ դարձրած պայծառակերպությունը տեղի է ունեցել լեռան վրա. տե՛ս Հ. Քյոսեյան, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ26–29։*

[9] *Տես անդ, էջ 190։*

[10] *Աստվածաշնչական այս տեղի արձագանքն են ժամագրքի հետեւյալ տողերը. «Այսաւր ի գլուխ լերանց տուն Աստուծոյ հաստատեալ, որ եւ յաւէտ ոռոգիս յամպոց, Հոգւոյն աստուածաբուղխ առատահոս անձրեւաւք...». Ժամագիրք, Նիւ-Եորք, 1986, էջ 322։*

[11] *Բացատրելով այս տեղին՝ Հովհան Ոսկեբերանը նկատում է. «Եւ զայս զի՞արդ կամիցին մեկնել հրէայն. քանզի ոչ եթէ ի վերայ գլխոց լերանց շինեցաւ տաճարն, իսկ եկեղեցւոյ զաւրութիւնն, եւ արդ իսկ ի բարձունս երկնից եհաս, եւ որպէս տաճարի, որ ի գլուխ լերանց շինեալ իցէ, եւ ամենեցուն յայտնի իցէ, սոյնպէս եւ ասէ յայտնի եղեւ ամենայնի». «Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի», Վենետիկ, 1880, էջ 3։*

այս տեղիներն աչքի առջեւ ունենալով՝ Ներսես Շնորհալին Երանիների («Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն». Մատթ. Ե. 2) մեկնության մեջ գրում է. «Տե՛ս զանմեծարգութիւն նորա, զի ոչ ի քաղաքս եւ ի գեաւղս շրջէր նոքաւք, այլ՝ յանապատի եւ ի լերինս, զի զմեզ խրատեսցէ փախչել յամենայն վայրաքարշ մարդկային ախտից եւ ընդ նմա ելանել հոգւով յիմանալի լեառն իմաստից, որպէս եւ աշակերտքն յայնժամ, եւ հայել ի բարձրութենէ անտի ի խոնարհ, եւ նկատել, զորս ի ստորին աշխարհի ըմբռնեալ են մեղաւք, եւ փախչել յայնցանէ։ Նայել դարձեալ իբր ի դիտանոցէ եւ տեսանել անտուստ զերկնից արքայութիւնն եւ զդրախտին վայելչութիւն, եւ ցանկալ նմին, զորս իբրեւ մատամբ իմն ցուցանէ Տէրն երանութեանս մասամբ։ Եւ դարձեալ վասն այնորիկ հանէ զնոսա յանապատ, զի յամենայն կողմանց յապահովացեալք, մտադիւրութեամբ ընկալցին զբանն։ Որպէս որք զմանկունսն ուսուցանեն՝ յանապատ տեղիս տանին, զի ի զբաղմանց ժողովեալ զմիտս, դիւրաւ ուսցին։ Ըստ որում եւ ժողովրդեանն Իսրայէլի ոչ յԵգիպտոս, այլ յանապատին տայր զկենաց պատգամս...»[12]։

Աստվածաշնչում տեղ գտած լեռան նկարագրությունները որոշակի օրինաչափությամբ ձեռք են բերում իմաստային կայուն միավորի հանգամանք, ինչը թույլ է տալիս նրանում տեսնել այն բոլոր անհրաժեշտ

---

[12] ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, *Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի», աշխատ. Ա. Աւետիսեանի, Մշ, հտ. ԻԲ, էջ 537 [4–8] հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի յԱւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826, էջ 209(ճառ. ԺԵ.)։ Հետեւելով Ոսկեբերանին եւ Շնորհալուն՝ Գրիգոր Տաթեւացին Մատթեի Ավետարանի մեկնության մեջ գրում է. «Հարց. Ընդէ՞ր ի լեառն, յորժամ կամէր զխորհուրդս արքայութեան ի ձեռն Թ. (9) երանութեանց ուսուցանել։ Պատասխանի. Ասեմք. վասն բազում պատճառի. նախ՝ ուսուցանէ մեզ. զանփառասէր միտս ստանալ ի վարդապետել կամ ելանել յանապատ, եւ անդ ուսուցանել զաշակերտսն։ Երկրորդ. Որ ոք կամի զիմաստութիւն ուսանել, պարտ է փախչել ի վայրաքարշ ախտէ մարմնական, եւ զմիտս հեռացուցանել յախտաւոր խորհրդոց, եւ ապա կարէ ուսանիլ։ Երրորդ. Զի որք ի մեղս վարակեալ իցեն՝ ոչ իմանան զազրութիւն գործոցն՝ պարտ է ելանել ի լեառն ապաշխարութեան եւ ճանաչել զծանրութիւն մեղացն։ Չորրորդ. զի որ կամին ի հեռաւոր ինչ տեղի տեսանել՝ թողուն զձորն եւ ի լեառն ելանեն, այսպէս եւ որք կամին զդրախտն իմանալի նկատել, թէ ուստի ելին՝ պարտ է ի լեառն առաքինութեան ելանել, եւ ապա ըստ բարեաց գործ հայել։ Հինգերորդ. Որ զպայծառ լոյսն եւ զբստակ աւդ խնդրէ՝ ի գլուխ լերինն ելանէ, այսպէս, որ զպայծառ լոյսն ճշմարիտ եւ զիմաստութիւն կամի ուսանել՝ ի լեառն հաւատոյ եւ առաքինի գործոց պարտ է բարձրանալ։ Վեցերորդ. Զի յորժամ ուսուցանեն վարդապետք զաշակերտս՝ ոչ ի մէջ քաղաքի, այլ անքոյթ տեղիս եւ անապատ տանին, այսպէս եւ Քրիստոս զաշակերտս յապահովս ի լեառն տարաւ եւ ուսոյց։ Եւթներորդ. Որ զհին աւրէնքն ետ ի լեառն, ոչ էր պարտ զնորս ի ստորեւս տալ, զի մի՛ կարծիցի փոքր քան զառաջինն, եւ թէր եւս». ՄՄ, ձեռ. 6102,թ. 66աբ, 3578, թ. 56աբ։*

հատկությունները, որոնք բնորոշ են խորհրդին[13] ։ Լեռան այսօրինակ բնույթը, պատշաճ իմաստավորումով, իր բնական արձագանքն է գտել հայրախոսական ժառանգության մեջ։ Այսպես, ս. Գրիգոր Նազիանզացին (Աստվածաբան) իր «Աստվածաբանության մասին» շարքի Երկրորդ ճառում շեշտում է այն կարեւորությունը, որ բարձրադիր վայրը կարող է ունենալ հոգեւոր վերհառնումի համար։ Մովսես նախամարգարեի անունից նա նկատում է. «Աստված պատվիրում է ինձ մտնել ամպի մեջ նրա հետ զրուցելու համար։ Ես կփափագեի, որ հայտնվեր մի ոմն Ահարոն, որ կարող էր դառնալ ճանապարհորդությանս արբանյակն, ու գտնվել ինձ մոտիկ, եթե նույնիսկ նա չհամարձակվեր մտնել ամպի մեջ... քահանաները լեռան վրա կլինեին ավելի ցածր....։ Սակայն ժողովուրդը, որ ամենեւին արժանի չէ, որ բարձրանա այդօրինակ վեհ հայեցության՝ կմնա լեռան ստորոտին՝ չմերձենալով նրան, քանզի նա անմաքուր է ու նվիրյալ չէ. նա կարող է մեռնել։ Եթե նա ջանք թափի մի փոքր մաքրվել՝ նա կարող է հեռվից լսել շեփորների ձայնը, այսինքն՝ խորհրդի ինչ-որ պարզ բացատրությունը....։ Այսինքն՝ մտահայեցությանն ու աստվածաբանությանն անընդունակ մարդիկ թող կատաղորեն չհարձակվեն հրամանակարգ տեսությունների (դոգմա) վրա, թող նրանք հնարավորինս հեռու մնան լեռից, այլապես նրանք կքարկոծվեն»[14]։ Այսու լեռան գագաթը խարհրդական բնակավայրն է համարվում Աստվածության, այն է՝ աստվածաբանական ճշմարտությունների, որոնց մոտ կարող են բարձրանալ միայն հոգով մաքուրները[15]։

Ըստ այսմ՝ միջնադարի խորհրդաբանական միտքը, իրեն բնորոշ հոգեւոր վերացարկումով, ի հայտ է բերում «Լեռ = Եկեղեցի», «Լեռ = Խաչ»,

---

[13] *Լեռան վերաբերյալ այս ըմբռնում բնորոշ չէ միայն աստվածաշնչական իրականությանը. Այն իր արտացոլումը գտել է հին չինական կերպարվեստի տեսությանը սահմանակցող հետեւյալ խտացման մեջ. «սարն օժտված է աքողված հնարավորություններով». տե՛ս* Е. Завадская, «Беседы о живописи» Ши-Тао, М., 1978, *էջ 80։*

[14] PG, t. 36, 28 AC. *տե՛ս* Вл. Лосский, Очерки мистического богословия Восточной церкви, перевод с франц. *հետեւյալ հրատ. մեջ.* «Мистическое Богословие», *Կիեւ, 1991, էջ120–121։*

[15] *Համաձայն «Մահ մարգարէից» սուրբգրային պարականոնի, տաճարի ավերումից առաջ Երեմիա մարգարեն «յափշտակեաց զտապանակն աւրինաց եւ որ ինչ ի նմա, եւ արար զնոսա կլանել վիմին»։ Ըստ ավանդազրույցներից մեկի, ս. Թեկղը (Ա. դ.) հալածողներից թաքնվեց ժայռի ծերպում, որը բացվեց, որպեսզի ընդունի նրան. տե՛ս «Թանգարան հին եւ նոր նախնեաց». «Ա. Անկանոն գիրք Հին կտակարանաց», աշխատ. Ս.Յովսէփեանի, Վենետիկ, 1896, էջ 222–223,* Дж. Холл, Словарь сюжетов и символов в искусстве, пер. с англ. и вступ. статья А. Майкопара, М., 1996, *էջ 582։*

«Լեռ = Քրիստոս», «Լեռ = Աստվածածին», «Լեռ = Իմաստություն», «լեռներ = առաքյալներ», «Լեռ = սրբազան Մատյան» զուգորդումները[16], որոնք ինքնին մատնացույց են անում սուրբգրային մեկնարվեստի բովանդակային որոշակի օրինաչափություններ։

Այսպես՝ հայրախոսական ժառանգության մեջ լեռը համարվում է սրբազան տարածք, աղոթատեղի, որն ինքնին նպաստավոր է Աստծու հետ հաղորդակցման համար։ Աստվածաշնչի բարձր հեղինակությամբ արդարացված այս վերաբերմունքն իր բավական հստակ արտացոլումն է գտել մեկնողական երկերում եւ ճառերում։ Այսպես՝ Կյուրեղ Երուսաղեմացու անունով հայտնի «Սուրբ խորհուրդների մասին» երկում կարդում ենք. «Այս մասին շատ տարիներ առաջ երանելի Եսային մարգարեանալով ասել է. «Եւ Տերը բոլոր ազգերի համար այնպես պիտի անի, որ այս լեռան վրա (լեռ է անվանում եկեղեցուն մեկ ուրիշ տեղ եւս, երբ ասում է. «Վերջին օրերին պիտի հայտնվի Տիրոջ լեռը» [Ես. Բ. 2]) գինի խմեն, ուրախություն վայելեն, մեռոնով օծվեն» (Ես. ԻԵ. 6)[17]։ Կիրառելով այս նույն, արդեն օրինաչափ դարձած, «Լեռ = եկեղեցի» խորհրդական զուգորդումը՝ Եսայու մարգարեության «Զի եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն Տեառն» (Բ. 2)տեղիի վերաբերյալ՝ Հովհան Ոսկեբերանը նկատում է. «Իսկ լեառն զեկեղեցի կոչէ եւ զկրաւնիցն ամրութիւնս. զի զաւր աւրինակ յորժամ զամուր լերամբք թէպէտ եւ բիւրք բուրուց զաւրաց պատիցին, աղեղունս լարիցեն... հնարս հնարիցին, սակայն ամուր եւ անառիկ լերանցն ինչ ոչ վնասիցեն... սոյնպէս եւ որ ընդ եկեղեցւոյ մարտեան հանապազ, զնա ինչ ոչ կարացին շարժել...»[18]։ «Լեռ=Եկեղեցի» խորհրդաբանությունն արտացոլվել է Ներսես Շնորհալու Մատթեի մեկնության մեջ, ուր բացատրելով «Ոչ կարէ քաղաք թաքչել, որ ի լերին կայցէ» (Ե. 14) բառերը՝ նա գրում է. «Արդ, այսու ... զիւր զաւրութիւնն ծանոյց, որ շե-

---

[16] Գրիգոր Տաթեւացին Հարցմանց գրքում հիշատակում է «մշտնջենաւոր լեռների» հետեւյալ խորհրդաբանական շարքը. Հրեշտակաց դասեր, նահապետներ, մարգարեներ։ «Մշտնջենաւոր լեռներ» են որակված Ադինա լեռը, որի վրա օրհնվեցին նախաստեղծները. Մասիս լեռը, ամորհացիների լեռը, որի վրա օրհնվեց Աբրահամը, երբ նա պատրաստվում էր զոհել Իսահակին, Ջիթենյաց, Թաբոր լեռները եւ այլն. տե՛ս «Գիրք Հարցմանց», Կ. Պոլիս, 1729, էջ 319–320։

[17] «Սուրբ խորհուրդների մասին». Ուսուցում երրորդ. տե՛ս Ս. ԿԻՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ, Կոչումն ընծայութեան, թրգմ. հին հունարենից պրոֆ. Ս. Կրկյաշարյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 374։ Ի դեպ, «Սուրբ խորհուրդների մասին» երկի հին հայերեն թարգմանությունը բացակայում է։ Ենթադրվում է, թե այն «Կոչումն ընծայութեան» բնագրին կցվել է հետագայում։

[18] «Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի մեկնութիւն Եսայեայ մարգարէի», էջ 1։

նեաց զեկեղեցի իւր ի վերայ երկնային լերին՝ հաւատոյ հիմանն»[19]։ Իսկ Բարձրացուցէքի մեկնության մեջ նա հետեւյալ ընդհանրացումն է անում. «Քանզի լեառն ասէ, յորում բնակիլ հաճեցաւ Աստուած [եւ բնակեսցէ ի սպառ]» (Սաղմ. Կէ. 17). Մարգարէն Դաւիթ լերին նմանեցուցանէ զխաչս բնակիլ հաճութեամբ եւ ի սպառ, ոչ զգալի՝ որպէս զՍիոն եւ զԵրուսաղէմ, այլ՝ իմանալի Խաչս եւ Եկեղեցի[20]։

Զի այս ոչ ինչ կարի աւտարացուցանելով ի բանէս բանդ է. Լեառն ասել՝ զխաչս չաւտարացուցանէ ի բանէս, այլ՝ աւելի կարեւոր եւ վա[յ] ելչական[21]»։

«Լեռ = Եկեղեցի», «Լեռ = Խաչ» զուգորդումը վարդապետական օրինաչափությամբ պետք է հարաբերվեր «Լեռ = Քրիստոս» զուգորդումին։ Այսպես, Օգոստինոս Երանելին իր «Խոստովանություններում», դիմելով Քրիստոսին, նկատում է. «Եւ քանի որ մեր հոգին անհանգիստ էր, հիշեցինք Քո մասին, Տեր «Հորդանանի երկրից» (Սաղմ. ԽԱ. 7), Քո մեծության լեռից, որ փոքր էր դարձել մեզ համար»[22]։ Այս զուգորդումը կենցաղավարում է նաեւ Գրիգոր Տաթեւացու Սաղմոսաց մեկնության մեջ։ Բացատրելով «Որ յուսայ ի Տէր որպէս լեառն Սիոն» (ՃԻԴ. 1) տեղին՝ նա ասում է «Զի ամենայն մարդ ի Տէր յուսացեալ անսասան մնայ որպէս լեառն Սիոն։ Նախ՝ որպէս լեառն անշարժ է, սոյնպէս եւ նա յամենայն փորձութիւնս անշարժ եւ հաստատ է։ Երկրորդ՝ զի բարձր է եւ յոյս նորա ի բարձունս է առ Տէր...։ Հինգերորդ՝ զի գլուխ հաւաք է քան զստորոտն, եւ նա ի բազմաց ստորնայնոց հեռացեալ առ մինն հաւաքէ։ Վեցերորդ՝ զի Սիոն թէպէտ աւերեցաւ, դարձեալ շինեցաւ, եւ յուսացողն ի Տէր յետ փորձանացն հաստատի դարձեալ որպէս Յոբ եւ Աբրահամ»[23]։

---

[19] Սբ. Ներսէս Շնորհալի, *Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի», էջ 563 [231]։*

[20] *Դաւթի քահանայի «Զոր Փիղովնի ասացեալ է ի սակաւուց» խորագրով մեկնողական մի երկում բերված այլաբանական պատկերների ցանկում արձանագրված է. «Լեռն՝ եկեղեցի». ՄՀ, հտ. Ժ, էջ 949 [496]։ Տիրատուր Կիլիկեցի վարդապետը (ԺԴ. դ.) տեսականորեն հաստատում եւ հիմնավորում է տվյալ այլաբանությունը հետեւյալ կերպ. «Եկեղեցի լեառն ասի վասն անվանելի զաւրութեան եւ բարձրագոյն խորհրդոյն, ըստ բանին Տեառն Պետրոսի, թէ՝ Դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն» (Մատթ. ԺԶ. 18). ՄՄ, ձեռ. 2322, թ. 48ա։*

[21] *ՄՀ, հտ. ԻԲ., էջ 616 [335–336]։*

[22] Օգոստինոս Երանելի, *Խոստովանություններ, Թարգմանությունը լատիներենից՝ անգլերեն թարգմանության համեմատությամբ՝ Խաչիկ Գրիգորյանի, խմբ. եւ ներած. Հակոբ Քյոսեյանի, Երեւան, 2002, Գիրք ԺԳ., XII, էջ 275, ծան. 17։*

[23] Գրիգոր Տաթեւացի, *Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 68–69։ Լեռների քրիստոսական բովանդակությունն է մատնացույց անում Վարդան Արեւելցին՝ նկատելով. «Այնպէս թուէր ցնծալ*

Հիշյալ օրինաչափությամբ Լեռը բնորոշումն է համարվում Մարիամ Աստվածածնի։ Այս է վկայում այդ բնորոշման կայուն կիրառությունը Հայ եկեղեցական մատենագրության մեջ։ Այսպես՝ Պետրոս Սյունեցին «Գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մարիամ...» ներբողյանում ավետարանական ոգով բացականչում է. «Ուրա՛խ լեր, Մարիա՛մ, Լեառն սուրբ, յորում ստեղծիչն Մովսէսի նորահրաշ տնաւրէնութեամբ առագաստեալ վարագուրեցաւ...»[24]։ Հետագայում այս որակումը կիրառում է նաեւ Եսայի Նչեցին Աստվածամոր վերափոխմանը նվիրված ճառում, ուր հավանաբար աչքի առջեւ ունենալով Պետրոս Սյունեցու Ներբողյանը, ինչպես նաեւ՝ Բարդուղիմեոս Մարաղացու Խոստովանության նվիրված մի քարոզը[25]՝ նա սքոլաստիկ եղանակով հիմնավորում է դրա օգտագործման օրինաչափությունը. Աստվածածինը «կոչի եւ լեառն. Նախ, զի ծայր լերինն մերձ է յերկինն, եւ հեռի է յերկրէ, սոյնպէս եւ Կոյսն սուրբ հեռի էր ի սիրոյ աշխարհէս, եւ մերձ առ աստուածափափագ սրտին։ Երկրորդ՝ զի լեառն անկոխ է ի մարդկանէ, սոյնպէս եւ Կոյսն սուրբ՝ ի սատանայէ եւ յամենայն դիւական փորձութենէ։ Երրորդ՝ զի ստորոտ լերինն լայն է եւ ընդարձակ, եւ ծայր նուրբ է եւ սուր, սոյնպէս եւ Կոյսն սուրբ լայնացեալ եւ ընդարձակեալ էր սրտիւն, որ զանպարագրելին պարագրեաց յորովայնին, եւ նուրբ եւ սուր է մտաւք, որ զանտանելին Աստուած տեսանէր ի միաւորեալ մարմին։ Չորրորդ՝ զի ծայր լերինն ի գիճութեանց շուտով ցամաքի, եւ Կոյսն սուրբ ցամաքեցաւ փութով ի գիճութենէ մեղաց ի մաւրն յարգանդի, զի յորովայնէ ընտրեցաւ։ Հինգերորդ՝ զի արեգակն ի ծագիլն յարեւելից նախ զծայր լերինն լուսաւորէ եւ ապա մերձ գալովն զստորոտինսն լուսաւորէ, սոյնպէս եւ իմանալի Արեգակն Բանն Աստուած ի ծագիլն ի Հաւրէ նախ զԿոյսն լուսաւորեաց՝ իջանելով ի յարգանդ նորին, եւ ապա առեցեալ մարմին մերձեցաւ առ մեզ, եւ աստուածային բանիւն՝ վարդապետութեամբն լուսաւորեաց զմեզ։ Վեցերորդ, զի որ բարձրանայ ի գլուխ լերինն՝ զընդարձակութիւն երկնից

լերանց եւ խայտալ բլրոց, ուր նշոյլք փառաց Տեառն փայլէին...». Վարդան Բարձրաբերդցի, Մեկնութիւն Սաղմոսաց, Աստրախան, 1797, էջ 380։

[24] *Տե՛ս «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության», աշխատ.՝ Պ. Խաչատրյանի եւ Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 167(Դ)։*

[25] *Տե՛ս «Խրատականք եւ հոգեշահք քարոզք շարադրեալ յերկոցունց աստուածաբանից եւ յոգնահանճարից վարդապետաց ի կարգէ Քարոզողաց, այսինքն՝ երանելւոյն Բարդուղիմէոսի եւ Պետրոսի Արագոնացւոյ», Վենետիկ, 1704, էջ 53–78։*

վայելէ։ Եաթներորդ, զի ի գլուխ լերին աւդն բարեխառն է եւ առողջ, եւ բարեսուն առնէ զմարդն, սոյնպէս եւ որ դիմէ առ Կոյսն՝ ազատի ի մահաբեր գարշահոտութենէն մեղաց, եւ բարեսուն լինի հոգին առողջ առաքինութեամբ... Իններորդ, զի լեառն լի է բժշկարար ծաղկաւք, եւ Կոյսն լի է հրաշալի սքանչելեաւք, զի նա տայ առողջութիւն մարմնոյ... Տասներորդ, զի մարդն ի լեառն ելեալ տեսանէ զբազմութիւն ծաղկանց, սիրտն մխիթարի ի բացութիւն...»[26]։

Հանձին Եւագր Պոնտացու ժառանգության, Արեւելքի խորհրդապաշտական փորձառության մեջ լեռը նկատվել է համարժեքը հոգեւոր գիտության։ Սրա մասին նրա «Հարիւրաւորք վեցերորդք» երկասիրության՝ Կիրակոս Երզնկացու լուծմունքում կարդում ենք. «[Բան]. Լեառն հոգեւոր է գիտութիւն բարձրագոյն, եւ որ ելանէ ի նա՝ անսխալ հայի յամենայն իմաստութիւն բանաւորաց[27]։ Լուծումն. Դաւիթ ասէ. Ո՞վ ելցէ ի լեառն Տեառն» (Սաղմ. ԻԳ. 3)։ «Լեառն» իմաստութիւնն է։ Եւ որպէս լեառն զառ ի վեր եւ դժուարին է ելողին, եւ յորժամ ելանէ անխափան, զամենայն ստորեւ կացեալսն տեսանէ։ Նոյնպէս եւ յիմաստութեան լեառն ջանիւ եւ աշխատութեամբ ելանեմք՝ առաքինի վարիւք եւ հանապազ ընթերցմամբ աստուածային տառից, եւ երբ ելանէ՝ անսխալ իմանայ զամենայն իմաստութիւն իմաստասէր բանաւորաց եւ զմիտս

---

[26] Ես սայ Ն ջ ե ց ի, *Ճառք, աշխատ. Յ. Քէօսէեանի, Երեւան, 2024, էջ 129–130։ Այս տողերի հետ խորհրդաբանորեն համաձայնում է Հովհաննես Վանական Տավուշեցու «Յաղագս վեցօրեայ արարչութեան» ճառի այն դրվագը, ուր նա հորդորում է հավաքել ոչ թե լեռան ստորոտին, ոտնատակ եղող բույսերն ու ծաղիկները, այլ լեռան գագաթին աճող ծաղիկները, որոնք սնվում են լեռնագագաթի երկնամերձ, անապական օդով. «Եթէ ոք կամեսցի բազմազան եւ երջանիկ ծաղկանց հոգ տանել առ ախտացելոցն բժշկութիւն, զի կարող լիցի ի վերայ հասանել ախտիցն զանազանութեան, որք ի լուսոյ են զրկեալ կամ խելապատակ ուղղոյն ապականեալ եւ կամ թէ ոտիցն եւ ձեռացն ուղղութիւն թիւրեալ իցէ՝ պարտ է զվայրս եւ զտեղիս քննել, որք հմուտ են գործոյն, եւ յայտ են, զի լսեն, թէ ոչ գոն արմատք ծաղկանց ի փողոցս գիւղից եւ ոչ յանցս ճանապարհաց, կամ ի մակաղատեղս անասնոց եւ յորջդս գազանաց, այլ յայլ բարձրագահ անապատացեալ եւ յազատաբնակ ապահովացեալ տեղիս»։ Նմանապէս հոգեւոր առողջութեան համար միջոցներ պէտք է փնտրել ոչ թէ անասունների մակատեղիներ ակնարկող ստորին խորհուրդներից՝ «սրտմտական ատելութեան եւ ցանկութեան եւ այլոցն ախտից», այլ «աստուածաբնակ եւ հոգեզարդ» մտածումներից, «որոց արմատք են սաղմոսք, աղաւթք եւ երգք հոգեւորականք եւ որոճումն մշտակայ աստուածային պատգամաց». տե՛ս* Յ. Քէ օ ս է ե ա ն, *Էջեր Վանական վարդապետ Տաւուշեցու մատենագրական ժառանգությունից, ՀԱ, 2020, էջ 34։*

[27] *Խորհրդական այս տրամաբանությամբ է առաջնորդվում Սիմեոն Նոր-Աստվածաբանը, որի համար հոգեւոր պայծառացումը «Աստվածային գիտության եւ աստվածային հայեցության լեռ» է, ուր «մենք կլսենք Հոր ձայնը». տե՛ս* Божественные гимны преподобного Симеона Нового Богослова, перевод с греч. Сергиев Посад, 1917 (гимн XLVII), *էջ 222։*

ամենայն Գրոց»[28]։ Այսօրինակ իմաստությունը նպաստում է ներհայեցությանը։ Տվյալ հանգամանքն ի մտի ունենալով «Ս. Գրիգորի վարդապետության» հեղինակը նկատում է .«Վասն այսորիկ առեալ շրջեցուցնէր զնոսա ընդ անապատն՝ ինքնատես ի լերինն լինելով, եւ ազգի ազգի նշանաւք եւ արուեստիւք ի ձեռն Մովսիսի զզաւակն աբրահամեան հրահանգէր...»[29]։

Հայ միջնադարի խորհրդաբանական միտքը լեռները այլաբանությունն է համարում մարգարեների, առաքյալների, ավետարանիչների ու նրանց աշակերտների։ Այս կապակցությամբ հետեւյալն ենք կարդում Սամվել Կամրջաձորեցու (ԺԴ.) «Յաղագս տաւնից տէրունականաց» երկում. «Լերինս զառաքեալսն պարտ է իմանալ քաղցր վարդապետութեամբն, եւ բլուրս *(Յովէլ Գ. 19)՝զաշակերտս նոցա, որք տղայացելոցն ի Քրիստոս կաթն ջամբեցին...»[30] ։ Հավանաբար աչքի առջեւ ունենալով այս մեկնությունը՝ ԺԲ.–ԺԳ. դարի հեղինակ Դավիթ Քոբայրեցին իր՝ Եսայու մարգարեության մեկնության մեջ, բացատրելով «Եւ բլուրք ՝ զարդարութիւն» բառերը՝ նկատում է. «Առակէ ի լերինս եւ ի բլուրս զառաքեալս եւ զաւետարանիչս եւ զաւրինացս Աստուծոյ բարձրագոյն աւանդութիւնս, զորս հնչեցուցանեն ի լսելիսն հաւատացելոց ճշմարտութեան քարոզիչք, ըստ այնմ, թէ՝ «Ել ի վերայ լերինդ բարձու աւետարանիչդ Սիոնի» (Ես. Խ. 9)[31]։ Վահրամ Ռաբունին (ԺԳ. դ.) եւս հավատարիմ մնալով միջնադարի խորհրդաբանական լեզվամտածողությանը՝ լեռներն այլաբանությունն է նկատում առաքյալների ու մարգարեների։ Իր «Վասն գալստեանն Քրիստոսի յԵրուսաղէմ յաւանական» քարոզում, որ տեղ է գտել Տիրատուր Կիլիկեցու (ԺԴ. դ.)ընդարձակ ճառում, կարդում ենք. «Լերինք ցնծասցեն, ասէ, առաջի Տեառն, զի գայ, եւ հասեալ է Տէր ի դատաստան» (Սաղմ. Ղէ. 8–9)։ Աստանաւր իրաւունս համարիմ յապաղումն առնել նախերգութեանս, եւ զխորհրդական բան մարգարէիս տեսանել, թէ ընդէ՞ր յամենայն հողեղէն մասանց լերանց միայն աւետէ ցնծալ....։*

---

[28] *Տե՛ս* Զ.Ա.Ք.Ա.Ր.Ի.Ա Ե. ՎՐԴ. Բ.Ա.Ղ.Ի.Ս.Ե.Ա.Ն, *Կիրակոս Երզնկացու սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները, Երեւան, 2022, էջ378–379։*

[29] *Տե՛ս ՄՀ, հտ. Բ., էջ 1450–1451 [20]։*

[30] *Տե՛ս ՄՀ, հտ. ԺԴ., էջ [98]։*

[31] *Երուսաղէմ, ձեռ. 1758, էջ 396։*

Ապա թէ այլաբանութիւն ի բանէս պահանջես՝ լերինս գիտեա՛ զլերինս յաւիտենականս...»[32]։

«Լեռ = Սրբազան մատեան» խորհրդական զուգորդումը տեղ է գտել հայ եկեղեցական մատենագրության վաղագույն հուշարձաններից մեկում՝ «Սուրբ Գրիգորի վարդապետության» մեջ, ուր ասված է, թե Գրիգոր Լուսավորիչը Քրիստոսի օրինակով լեռան վրա աշակերտներ էր հավաքում, «եւ այնպէս երեկաւթս արարեալ ի լերինն աւուրս բազումս, եւ ականատես եղեալ եւ զաւրէն հոգեմատեան դիւանին զլեառն արարեալ, ուսուցանէր զորդիսն Իսրայէլի...»[33], որով լեռը դարձնում էր սրբազան Մատյան եւ ըստ այդմ ուսուցանում[34]։

Հոգեւոր գործառույթի կարեւոր բաղադրատարր է նկատվում լեռան բարձունքի հաղթահարումը, բուն իսկ վերելքը։ Այս պահի հոգեւոր իմաստի մեջ թափանցելու համար մեկ անգամ եւս իր շահեկան նպաստն է բերում փիլոնյան խորհրդածությունը։ Համաձայն Փիլոնի, լեռ բարձրանալու գլխավոր նախապայմանը՝ «կարել զԱստուած տեսանել է, բայց այս անհնար է լինել այնմ, որ ոչ է կազմեալ զիւր ոգիսն... սրբարան եւ ամենեւին տաճար Աստուծոյ»։ Մովսեսին էր վիճակված լինել «ամենեւին տաճար Աստուծոյ», ուստի նա «առաւ ի լեառն բարձր, ընդ որում ելանել այլոցն չէր արժանաւորութիւն....», քանզի այդպիսիք մարմնեղեն աչքերով չէին կարող տեսանել աներեւույթ բաները։ Մինչդեռ «բազում նշան մտաւորացն ի ձեռն յայտնի աչաց տեսլեան գրեալ լինի[35]», որով մարգարեն հաղորդ եղավ մարմնավոր կերպարանքով ներկայացած անմարմին արժեքին։ Սիմեոն Նոր Աստվածաբանը իսի-

---

[32] *Տե՛ս Հ. Քյոսեյան, Մի էջ Տիրատուր վարդապետ Կիլիկեցու աստվածաբանական ժառանգությունից, ԵՊՀ. Աստվածաբանության ֆակուլտետ. «Աստվածաբանական եւ կրոնագիտական հոդվածների ժողովածու», Զ., Երեւան, 2021, էջ 14–15։ «Յաւիտենական»՝ «Մշտանջենավոր լեռների» խորհրդաբանական ցանկում Տաթեւացին, որպես դրանց անձնավորում, հիշատակում է «նահապետներին ու մարգարեներին». Գիրք հարցմանց, էջ 319։*

[33] *«Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի». ՄՀ, հտ. Բ, էջ 1449–1450 [15]։*

[34] *Ի դեպ, Սեպուհ լեռն, ուր ճգնում էր Գրիգոր Լուսավորիչը, Հովհաննես Պլուզ Երզնկացին անվանում է «ամենունակ բարութեամբ լցեալ ճշմարիտ ճգնողին ճեմարան...». «Յովհաննու վարդապետի Երզնկացւոյ ասացուած ներբողական գովեստի ի սուրբ Լուսաւորիչն Հայոց Գրիգորիոս...». տե՛ս Սոփերք հայկականք, հտ. Ե, Վենետիկ, 1853,էջ 140։*

[35] *Մեկնուի. Ելից II ԾԱ, ԾԲ. տե՛ս «Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդ ի հայս...», էջ 506–507։ Մեկ այլ տեղ Փիլոնը նկատում է, թե միայն յոթներորդ օրը Մովսեսին իրավունք տրվեց բարձրանալ Սինա լեռը, քանզի յոթնյակը, տարբերվելով հողածին վեցնյակից, ակնարկում է մշտակուսությունը, այսինքն՝ վերելքը կատարվում է «յարփւոյն եւ առանց մարմնոյ». անդ, էջ 502։*

խաստներին[36] կոչ է անում նմանվել նրանց, «ովքեր Հիսուսի հետ միասին բարձրացան Թաբոր եւ տեսան կուրացուցիչ պայծառությունը, նրա զգեստների այլակերպումը եւ նրա դեմքի լույսը»[37]։ Նույն կոչն անում է Ներսես Շնորհալին իր ունկնդիրներին Վարդավառի տաղում, ուր Փիլոնի նման հայ հեղինակը դարձյալ շեշտում է վերելքին հոգեւորապես պատրաստ լինելու հանգամանքը. «Զարթի՛ք, Սիոնի՛ որդիք, յաւրհնութիւնս Տեառն/ Ելէ՛ք տեսանել զՏէր լեռնէս Հերմոնէ/Մի՛ յայս մերձենայք ի լեառն անսուրբ խորհրդով...»։ Նույն տաղի տարբերակում դարձեալ ասվում է. «Զարթի՛ք, Սիոնի՛ որդիք, յաւրհնութիւնս Տեառն/ Ելէ՛ք տեսանել զՏէր ի լեառն Թաբաւր»։ Իսկ տաղի Փոխում շեշտվում է վերելքի խորհրդական բովանդակությունը. «Մովսէս՝ աւրինաց տըւողն, մեծն Հեղիաս/ մաղթէին զելից քոց, Տէր ի յերուսաղէմ /Խաչիւ եւ արեամբ փրկել զորդիս Ադամայ/։ Նոցին պաղատանք ընդ մեր քեզ հաճոյասցին՝/ Հանել ընդ նոսին զմեզ լեառն իմանալի/ Ի մեծի ծագման քո, Տէր, հայրական փառաւք»[38]։ Բայց շատերն անկարող են բարձրանալ այդ լեռը, որովհետեւ «զառ ի վերն լալով գնան» (Ես. ԺԵ. 5)։ Հովհաննես Կոլոտենցն այս առիթով նկատում է. «Ծոյլք ի լեառն առաքինութեան ոչ կամին ելանել, այլ լան եւ անկարելի ասեն, վասն այն ջուր մկրտութեան շնորհացն պակասի ի նոցանէ...»[39]։

Սակայն լեռը նշանակն է ոչ միայն դրականի, այլեւ՝ բացասականի։ Այսպես, բացատրելով սաղմոսի «Տէ՛ր, խոնարհեցո՛ զերկինս եւ էջ, մերձեա՛ ի լերինս՝ եւ ծխեսցին» (ՃԽԴ. 5) ՝ Օգոստինոս Երանելին «լեռները» խորհրդանշանն է համարում գոռոզների[40]։ Նույն այս սաղմոսի մեկնության մեջ Վարդան Արեւելցին նկատում է. «Այլ եւ Տեառն Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, ողորմեա՛ ինձ» կաղապարի անդադար կրկնությունն է, խարսխված այն գաղափարին, որ Աստծու անունը սուրբ է, եւ դրա արտաբերումը ենթադրում է անմիջական հաղորդակցություն աստվածայինի հետ.- խմբ.։

---

[36] *Վանական ավանդույթ անվանակոչված հուն.* ἡσυχασμός *(խաղաղություն, լռություն, անդորրություն») բառով, որ ոչ միայն դասական եւ համեմատաբար նոր հունարենի արտասանությամբ, այլ նաեւ ըստ լեզուների է տարբերվում (անգլ.* Hesychasm-*ռուս.* Исихазм*)։ Այս վանականների համոզմամբ անդորրը ձեռք է բերվում անընդհատ կրկնվող աղթքով։ Թեեւ երեւույթն առկա էր դեռ վաղ քրիստոնեական վանքերում, սակայն վերջնականապես ձեւավորվել է ԺԴ. հարյուրամյակում՝ Աթոսի մենակյացների շրջանում։ Առավել տարածվածը «Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, ողորմեա՛ ինձ» կաղապարի անդադար կրկնությունն է, խարսխված այն գաղափարին, որ Աստծու անունը սուրբ է, եւ դրա արտաբերումը ենթադրում է անմիջական հաղորդակցություն աստվածայինի հետ.- խմբ.։*

[37] *Տէս* О. Томаш Шпидлик, Молитва согласно преданию Восточной церкви, перевод с итальянского / сверенный с французским оригиналом/ Н. Костоморовой, изд. 2, М.,СПб, 2013, *էջ 484։*

[38] *Տէս ՄՀ, հտ. ԻԲ, էջ 770 [17–20],772 [17–18], 777 [9–14]։*

[39] Հովհաննես Կոլոտենց, *Մեկնութիւն Եսայեայ մարգարէութեան, ՄՄ, ձեռ. 1128, թ. 54բ։*

[40] Օգոստինոս Երանելի, *Խոստովանություններ, էջ 129, ծան. 7։*

*սուսի պաղատանք է սրբոց, զոր ընկալեալ էջ, եւ զաւուրս քառասուն մարտեաւ, եւ յաղթեաց փորձողին եւ չարին ի լերինն՝ զմերձեկեալն եւ զանուանեալն լեառն Սուռնաբայ, որպէս ասէր, թէ ՝ Ասիցէք լերինս այսմիկ՝ փոխեաց, եւ Տէրն ի ծովն կորուսեալ զլուսնական դեւն նշանակելով։ Եւ ծխեսցին իբր կայծակ, որ անկանի ի ջուր, որպէս լեգէոնն՝ ի ծով»[41]։ Դավիթ Քոբայրեցին Հոբի մեկնության մեջ նկատում է. «...եւ լեառն հպարտութիւն դիւաց ի պաշտաւն կռոց»[42]։ Մեկնությանս մեկ այլ դրվագում (ԼԹ. 4) գտնում ենք հետեւյալ արտահայտությունը «...խայտալով ի վերայ լեռնացեալ հպարտութեան չարին»[43]։ Լեռներին տրված այսօրինակ գնահատական ներկա է «Ի փոխումն Տիրամաւրն» ճառում, ուր կարդում ենք. «Նոքա որսորդք՝ առաքեալք ի վերայ լերանց հպարտութեանց եւ ամբարտաւանութեան մոլորելոցն....»[44]։ Այս մտայնությունը կարելի է տեսնել նաեւ Օգոստինոսի Խոստովանությունների նույն դրվագում (գիրք Ութերորդ, II) . «Նա կարծում էր, որ նրանք իրենց բաբելոնյան արժանապատվության բարձրությունից, ինչպես «լիբանանյան մայրիներից, որոնց Տերը դեռեւս չէր փշրել» (Սաղմ. ԻՀ. 5), իր վրա կթափեն իրենց ատելության ողջ ծանրությունը»[45]։ Այս դիտումն իր հերթին, դարձյալ այլաբանությամբ, համերաշխվում է Եսայու «Եւ փառքն Լիբանանու առ քեզ եղիցին սարդիւն եւ սաւսիւն...» տեղիի (Կ. 13) Դավիթ Քոբայրեցու հետեւյալ մեկնությանը . «....Բայց առակաւ Լիբանանէ զլեառնացեալ հպարտութիւն սատանայի նշանակէ...»[46]։

Լեռներին տրված նույն գնահատականն արտահայտված է Մխիթար Գոշի՝ Երեմիայի մեկնության մեջ, ուր լուսաբանելով. «Ահաւասիկ ես ի վերայ քո լեառնդ ապականիչ, ասէ Տէր, որ ապականէիր զամենայն երկիր» (ԾԱ. 25) խոսքը՝ նկատում է. «Լեառն ապականիչ, վասն ամբարտաւանութեան նոցա ասէ, թաւալեցուցից ի վերայ, այսինքն՝ յիշխանացն, եւ տաց

---

[41] Վարդան Բարձրաբերդցի, *Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 484։ Վկայությանս մեջ չարին տրված «լուսնական դեւ» բնորոշումը թերեւս արձագանքն է Գրիգոր Նյուսացու Երգ երգոցի մեկնության «ցուցանէր բանիւն զչարն զայն զլուսնականն դեւ» արտահայտության. տես ՆԲՀ, հտ. Ա, էջ 902 («լուսնական»)։*

[42] *Վենետիկ, ձեռ. 347, թ. 81բ։*

[43] *Անդ, թ. 111ա։*

[44] *ՄՄ, ձեռ. 2262, թ. 170բ։*

[45] Օգոստինոս Երանելի, *Խոստովանություններ, էջ 130։*

[46] *Երուսաղէմ, ձեռ. 1758, էջ 458։*

զքեզ ի լեառնն այրեցեալ, ընդ այլ, ասէ, կործանեալ թագաւորութիւնս եդից զքեզ...»[47]*։*

«Շիջցին լերինք» (Ես. Ժ. 18) խոսքը հետեւյալ կերպ է բացատրում Հովհաննես Կոլոտենցը. «...Դարձեալ լեառն՝ սատանայ, բլուրք՝ չար թագաւորք եւ իշխանք...։ Դարձեալ գործոցն մեղքն՝ լեառն, բանից՝ բլուր...»[48]*։*

Ինչպես մյուս բոլոր հոգեւոր իրավիճակներում Լեռան խորհրդաբանության մեջ եւս կիրառված է արժեքների համեմատության այն եղանակը, որը սկիզբ է առնում Պողոս առաքյալի խորհրդածություններից։ Ցույց տալու համար ավետարանված շնորհի ակներեւ առավելությունը Սինայով հռչակված օրենքի նկատմամբ՝ նա դիմում է օրենքի տակ հեծող հրեաներին. «Ասէք ինչ ինձ, որ ընդ աւրինաւքն կամիք լինել, չիցէ՞ ընթերցեալ ձեր զաւրէնս։ Զի գրեալ է, թէ Աբրահամու երկու որդիք էին. մի՝ յաղախնոյ անտի, եւ մի՝ յազատէն։ Այլ որ յաղախնոյն էր, ըստ մարմնոյ ծնեալ էր, եւ որ յազատէն՝ ըստ աւետեացն, որ է առակ աւրինակի, զի այսինքն են երկու կտակարանք. մի՝ ի լեռնէ Սինեայ ի ծառայութիւն ծնեալ, որ է Հագար։ Քանզի Հագարն լեառն Սինեայ է յԱրաբիա, հաւասար է այսմ Երուսաղէմի, զի ծառայէ որդովք իւրովք հանդերձ։ Այլ վերին Երուսաղէմ ազատ է, որ է մայր մեր ամենեցուն» (Գաղատ. Դ. 22–26)։ Արժեքների այսօրինակ համեմատությունը պետք է որդեգրվեր միջնադարի քրիստոնեական մատենագրության մեջ։ Այսպես, Ստեփանոս Կրտսերի վարքում խոսելով սուրբ Ավքսենտիոս լեռան մասին, Ստեփանոս սարկավագը նկատում է. «Եթե մեկն այն անվանի Աստծու լեռ, կամ Քորեբ լեռ, կամ Կարմեղոս լեռ, կամ Սինա լեռ կամ Թաբոր, կամ Լիբանանի, կամ էլ Երուսաղեմյան բլուրների վրա հաստատված Սուրբ քաղաք՝ նա չի մեղանչի նմանության դեմ»[49]*։ Արժեքների համեմատության մեջ շատ ավելի առաջ է գնում հայ մատենագիրը։ Գրիգոր Լուսավորչին նվիրված իր նշանավոր ներբողում Հովհաննես Երզնկացին Սեպուհ լեռը, ուր ճգնում էր Լուսավորիչը, առավել է դասում Աստվածաշնչում նկարագրված սրբազան լեռներից։ Նա հիացմունքով օծուն հետեւյալ նկարագրությունն է*

---

[47] Մխիթար Գոշ, *Մեկնութիւն Երեմիայի մարգարէութեան, աշխատ. Ա. Բոզոեանի, ՄՀ, հտ. Ի., էջ 369 [52–53]։*

[48] *ՄՄ, ձեռ, 1128,թ. 39բ։*

[49] *Տես* «Analecta graeca dei Mauristi», Paris, 1588, էջ 417, I:Hausherr; Les lecons d'un contemplative; Paris; 1960, *էջ 54, հղումը՝ ըստ.* О. Томаш Шпидлик, Молитва согласно преданию Восточной церкви, *էջ 247։*

անում. «Այլ մերս դիտաւորութիւն յաղագս սրբութեան լերինս է, որ տեղի եղեւ երեսնամեայ ճգնութեան սրբոյն եւ դիր հանգստեան գերեզմանի սուրբ մարմնոյն, վասն որոյ եւ ի սոյն դարձուցից զբանս։ Բազում լերինք ըստ զանազան պատճառաց հռչակելի անուամբ յաշխարհի մեծարեալ պատուին, զի նախ յետ համաշխարհական ջուրցն հեղեղին պատուեցաւ լեառն Այրարատեան բարձրակառոյցն Մասիս՝ տեղի հանգստեան եղեալ տապանին, որ ունէր զխորհուրդ եկեղեցւոյ, եւ եղեւ վերստին ծնող մարդկութեանս։ Աբրահամ ի լերին ամուրհացւոց զԻսահակ Աստուծոյ պատարագէր, լեառն Քորեբ հրաշալի տեսլեամբն պատուի, զոր ետես Մովսէս ի խորհուրդ Կուսին զմորենին վառեալ, որ ոչ այրէր։ Լեառն Սինա երեւմամբն Աստուծոյ մեծարեցաւ, զի անդ տուան Մովսէսի տախտակքն աստուածագիծ ....։ Պատուեցաւ լեառն Թաբոր, զի անդ յայտնեաց Տէրն զփառս Աստուածութեան իւրոյ...»։ Այս բոլոր լեռների համեմատ Սեպուհ լեռն օժտված է ակներեւ առավելությամբ, որովհետեւ եթե Մասսի վրա հանգչած Նոյի տապանը լոկ մարմիններ փրկեց, ապա Սեպուհ լեռան վրա հանգչած Գրիգոր Լուսաւորչի՝ «կենդանի տապանը ի հոսանաց մեղաց եւ կռապաշտութենէ զոգիս բանական Հայաստան ազանց կեցուցանէր...»։ Եթե ամուրհացիների լեռան վրա Աբրահամն իր սիրելի որդուն պիտի նվիրագործեր, ապա «հայրն հաւատոյ լուսաւորիչն հոգւոց սուրբն Գրիգորիոս զծնունդն ոգւոյն զառաքինութեանց մասունս... եւ զմաքրութիւն մտացն Աստուծոյ նուիրէր»։ Եթե Սինա լեռան վրա «անուն քաջութեան Տեառն պատմի», ապա Սեպուհ լեռը «տեղի ժողովելոց հաւատացելոց բազմութեան»... «յորում աւրիորդն զարմանալի սրբուհին Մանի ի քոյդ քարայարկ այրի երկնանման վարուք ի մարմնի զանմարմնականացն ցուցանէր զհանդէս...»։ Սեպուհ լեռը ամեն ինչով նման է Կարմեղոս լեռանը, որի վրա աղոթում էր Եղիա մարգարեն. մինչդեռ «առաքելապատիւ հայրն մեր Գրիգորիոս» Երկնքից իջած հացով «յեկեղեցիս Հայաստանեայց աղբերացուցանէր»։ Ինչպես Եղիսե մարգարեն «զբանակս երկնաւորաց տեսանէր», «սուրբն Գրիգորիոս աղաւթիւք շրջապատեաց զքեզ, ո՜վ աստուածաբնակ լեռ...»։ Պատասխանելով մարգարեական հարցումին, թե՝ «Տէ՛ր. ո՞վ կացցէ ի խորանի քում կամ ո՞ բնակեսցէ ի լեառն սուրբ Քո» [Սաղմ. ԺԴ. 1]՝ ներբողագիր հեղինակն ասում է, թե այդ լեռան վրա բնակվում է «սուրբն Գրիգորիոս անբիծն վարուք...»։ Դարանաղյաց Սեպուհ լեռն արժեվորված է ոչ միայն իր բնական բարեմասնություններով, այլեւ սուրբ

Գրիգորի բնակատեղին լինելով[50], որով ոչ միայն լեռն է սրբագործում, այլեւ ինքն իսկ սրբագործվում է ճգնակյաց հոր օրհնյալ ներկայությամբ։

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում լուսաբանված է այն հոգեւոր դերակատարությունը, որ վերապահվել է լեռանը կամ լեռներին։ Վերհանված են այդ դերակատարության աստվածաշնչական ակունքներն ու լուսաբանված դրանց խորհրդաբանական վերացարկումը հայրախոսական ժառանգության եւ մասնավորաբար հայ եկեղեցական մատենագրության մեջ։ Արժեվորված են լեռան այլաբանական մի շարք զուգորդումները. Եկեղեցի, Խաչ, Քրիստոս, Աստվածածին, իմաստություն, առաքյալներ, սրբազան Մատյան, գնահատված դրանց՝ սուրբգրային մեկնարվեստում ունեցած օրինաչափ կիրառությունը։ Ներկայացված է նաեւ այն բացասական գնահատականը, որ տրվել է լեռանը մեկնողական փորձառության մեջ։ Անդրադարձ է արվում արժեքների համեմատության այն եղանակին, որ լայնորեն կիրառվում էր միջնադարի մշակութային իրականության մեջ։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Լեռ, սար, բլուր, այլաբանություն:

РЕЗЮМЕ

В статье рассматривается духовная символика, приписываемая горе и горным образам. Анализируются библейские истоки данной символики и особенности её интерпретации в святоотеческом наследии, в частности в армянской церковной литературе. Выявляется система аллегорических ассоциаций горы – с Церковью, Крестом, Христом, Богородицей, мудростью, апостолами и Священным Писанием,– а также оценивается устойчивость их использования в библейской экзегезе. Отмечается и негативная символическая нагрузка,

---

[50] *Տե՛ս Սոփերք հայկականք, հտ. Ե., Վենետիկ, 1853, էջ 123–143։*

придаваемая образу горы в ряде интерпретационных традиций. В работе также рассматривается метод сопоставления ценностных категорий, характерный для культурной реальности средневековья.

SUMMARY

The article examines the spiritual symbolism attributed to the mountain and mountain imagery. It analyzes the biblical origins of this symbolism and its interpretation within the patristic tradition, with particular attention to the Armenian ecclesiastical literature. The study identifies a system of allegorical associations of the mountain with the Church, the Cross, Christ, the Mother of God, wisdom, the Apostles, and the Holy Scriptures, and evaluates their consistent use in biblical exegesis. Attention is also paid to the negative symbolic connotations attributed to the image of the mountain in some interpretive traditions. In addition, the work examines the method of comparative assessment of values characteristic of the cultural reality of the Middle Ages.